ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

28 .11. 2015թ.Ք. Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/
Քարտուղար Գ. Առուշանյան /քարտուղար/

Խորհրդի նիստին մասնակցում էին նախագահ Ն. Խուդավերդյանը, քարտուղար Գ. Առուշանյանը, Հ. Մարզպանյանը, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Պ Ասիլբեկյանը, Գ. Ավետիսյանը, Վ. Առաքելյանը, ուս. խորհրդի նախագահ Լ. Ալեքսանյանը, ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը, Ս. Սաֆարյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Լսել ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ վարիչների ընթացիկ հաշվետվությունները:
/Զեկ. Հ. Մարզպանյան/
/Զեկ. Գ. Հովհաննիսյան/
2. Լսել ֆակուլտետի ուս. խորհրդի և ՈՒԳԸ նախագահների հաշվետվությունները համապատասխան կառույցների գործունեության վերաբերյալ:
/Զեկ Լ. Ալեքսանյան/
/Զեկ. Լ. Բլբուլյան/
3.Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

1. Լսեցին - «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի վարիչ Հ. Մարզպանյանին

Նա նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնում, նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան, տեղի են ունեցել բակալավրիատի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտական կրթական ծրագրի իրականացման գործընթացներ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտահետազոտական, գիտակազմակերպչական և այլ ոլորտներում: Ամբիոնի գործունեության մեջ կարելի է արձանագրել և՛ ձեռքբերումներ և՛ թերացումներ:

Ձեռքբերումներ.

- ✓ Ամբիոնի աշխատակիցների կողմից դասախոսությունները, սեմինար, գործնական պարապմունքները, քննությունները, ստուգարքները, ուսումնական և առարկայական ծրագրերով նախատեսված այլ կրթական գործընթացներն իրականացվել են պատշաճ մակարդակով, ինչի վկայությունն են շրջանավարտների ընթացիկ և հատկապես՝ ամփոփիչ ատեստավորման ավելի քան բավարար արդյունքները:
- ✓ Ամբիոնի աշխատակիցները հրատարակել են 34 գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, այդ թվում՝ մեկ մենագրություն, մեկ ուսումնական ձեռնարկ, երկու մեթոդական և երեսուն գիտական հոդված: Ընդ որում՝ գիտահետազոտական աշխատանքներից հինգը լույս է ընծայվել արտերկրում /Վրաստան, Ռուսաստան, Լեհաստան, Հնդկաստան, Գերմանիա/՝ միջազգային գրախոսվող հրատարակություններում:
- ✓ Ամբիոնի նախաձեռնությամբ ու անմիջական մասնակցությամբ կազմակերպվել է հանրապետական գիտաժողով, որի նյութերը հրատարակվել են գիտական հոդվածների ժողովածուի ձևաչափով:
- ✓ Ամբիոնի երկու աշխատակիցներ միջազգային հետազոտական դրամաշնորհային ծրագրի անդամներ են, որոնցից մեկը՝ ծրագրի ղեկավարի, մյուսը՝ ավագ հետազոտողի կարգավիճակով: Ծրագրում նաև նախաավարտական պրակտիկա է անցել ֆակուլտետի վեց ուսանող՝ ստանալով համապատասխան վկայագիր: Ծրագիրն արդեն ավարտվել է , իսկ դրա արդյունքը՝ անգլերեն լեզվով ակադեմիական հետազոտությունը, որպես համահեղինակային գիրք հանձնված է տպարան՝ հրատարակության: Գրքի էլեկտրոնային տարբերակը տեղադրված է դրամաշնորհ տրամադրած շվեյցարական կազմակերպության կայքէջում:
- ✓ Ամբիոնը նախաձեռնել է ՈՒԳԸ կոնֆերանսի անցկացում. քննարկվել և հաստատվել են համապատասխան ուսանողները և նրանց զեկուցումների թեմաները:
- ✓ Սահմանված ժամանակացույցի համաձայն տեղի են ունեցել ամբիոնի նիստեր, որոնցում հիմնականում քննարկվել են ուսումնական գործընթացի բարելավման մարտավարական և ռազմավարական խնդիրներ:

Թերացումներ.

- ▪ Ամբիոնի որոշ դասախոսներ դեռևս թույլ են տալիս աշխատանքային կարգապահության կամ ընթացակարգային խախտումներ՝ ժամանակին և սահմանված ձևաչափով չեն պատրաստում ու ներկայացնում դասընթացների փաթեթները, բացակայում են ամբիոնի կամ ֆակուլտետի խորհրդի նիստերից,

աշխատում են դասատախտակից շեղվելով և այլն: Նման դեպքերը չեն դարձել հատուկ քննարկման առարկա:

- Թույլ է կապը ֆակուլտետի ուս. խորհրդի և ՈՒԳԸ հետ: Ուսանողների հետազոտական աշխատանքները, որոնք հիմնականում սահմանափակվում են կուրսային և ավարտական աշխատանքների կատարմամբ, արդյունավետորեն չեն համակարգվում:

Ընթացիկ ուսումնական տարում ամբիոնը համալրվել է բարձրակարգ նոր դասախոսներով, որոշակիորեն բարելավվել է ներամբիոնային բարոյահոգեբանական մթնոլորտը, աշխատանքային կարգապահությունը, ինչը երաշխիքներ է ստեղծում առաջացած խնդիրները հաջողությամբ լուծելու համար:

Լսեցին - «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանին

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի կողմից իրականացվել են ամբիոնի աշխատանքային պլանում ներառված ծրագրերը, որոնք բխում են ֆակուլտետի ռազմավարական ծրագրից, դասախոսների անհատական զարգացման պլաններից և ամբիոնի գիտակրթական գործունեության բոլոր հիմնական ուղղություններից, ընթացակարգերից ու գործընթացներից:

Մասնաճյուղի գործունեության կազմակերպման ժամանակացույցով նախատեսված կարգով ժամկետներում ամբիոնի կողմից կազմվել և ուսանողներին են տրամադրվել նախատեսված կուրսային աշխատանքների թեմաները, առարկայական քննական հարցաշարերը:

Առարկայական ծրագրերը և դասընթացների փաթեթները դասախոսների կողմից վերանայվել են, արդիականացվել, թարմացվել են գրականության ցանկերը և ամբիոն են ներկայացվել ժամանակին, քննարկվելուց հետո հաստատվել են ամբիոնի կողմից: Դասախոսների մուտքերը և ծրագրերի կատարողականը պարբերաբար վերահսկվում են: Բոլոր դասախոսները իրականացրել են ծրագրով նախատեսված ծանրաբեռնվածությունները:

Միջոցառումներ են կատարվել ուսուցման գործընթացի օպտիմիլացման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Ամբիոնի վարիչի և կուրսային աշխատանքների ղեկավարների կողմից քննարկվել է կուրսային աշխատանքների կատարման ընթացքը և տրվել են կոնկրետ հանձնարարականներ ղեկավարներին և ուսանողներին՝ աշխատանքները ժամանակին և կանոնակարգով նախատեսված չափորոշիչներին համապատասխան կատարելու համար:

Դասախոսները ժամանակին ամբիոն են ներկայացվել հարցաշարերը, թեստերի և տոմսերի նմուշները: Ընթացիկ և եզրափակիչ քննություններն ու ստուգումները անց են կացվել կանոնակարգին համապատասխան:

Ամբիոնի վարիչի կողմից դասալսումների կատարողականը բավարար չէ, փոխարենը դասախոսների կողմից են կատարվում փոխադարձ դասալսումներ, որոնց արդյունքները քննարկվել են ամբիոնում: Կարծում եմ, որ դրանք նպաստում են դասավանդման որակի բարձրացմանը:

Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքներով ամբիոնի միջին գնահատականը սովորաբար բարձր է, որը, բնականաբար, պայմանավորված է ամբիոնի բոլոր դասախոսների բարձր միջին գնահատականներով: Վերջին հինգ տարիների համեմատությամբ բարձրացել են թե՛ ամբիոնի և թե՛ բոլոր դասախոսների միջին գնահատականները, ինչը վկայում է մեր դասախոսների աշխատանքի արդյունավետության և նրանց վարկանիշների բարձրացման մասին:

Հաշվետու ժամանակաշրջանում ամբիոնի ուշադրության կենտրոնում է նաև դասախոսների գիտական գործունեությունը: Ամբիոնի դոցենտ Ակսել Պոտոսյանը տաշտպանել է դոկտորական ատենախոսություն «ՀՀ, որպես լեռնային երկրի գյուղական տարաբնակեցման աշխ. Հետազոտության հիմնախնդիրները» թեմայով, իսկ ամբիոնի դասախոս Լիաննա Բեգինյանը պաշտպանել է «Հուղարկավորության ծեսերն ու սովորույթները Տավուշում» թեմայով իր թեկնածուական ատենախոսությունը:

ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դասախոսները ծավալել են գիտական և ուսումնամեթոդական գործունեություն: Ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանը համահեղինակ է 2014թ. պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարանների, 8-րդ դասարանի աշխարհագրության դասագիքի և գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքների մեթոդական ցուցումների: Ամբիոնի դասխոսների կողմից հրատարակվել են 11 գիտական հոդվածներ: Ամբիոնի դասախոսներ Ա. Պոտոսյանը, Վ. Գրիգորյանը, Ա. ՈՒլիխանյանը գիտական զեկույցով հանդես են եկել ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի և ՀՀ ՏԿ և ԱԻ նախարարության կողմից կազմակերպված հանրապետական գիտաժողովում: Ամբիոնի ասիստենտ Ա. ՈՒլիխանյանը կազմակերպել է Արշիլ Գորկուն նվիրված ուսանողական գիտաժողով: Ամբիոնի ասիստենտներ Վ. Գրիգորյանը և Ա. ՈՒլիխանյանը ղեկավարել են ՝<<Զբոսաշրջության հիմնախնդիրները Տավուշի մարզում>> թեմայի շրջանակներում ուսանողական գիտական զեկույցներ: ԵՊՀ ԻՄ տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնը դասախոսների կողմից 2014-2015 ուս. տարում հրատարակված 15 /տասնհինգ/ հրատարակություններից 10 /տաս/-ը գիտական հրատարակություններ են , իսկ 8/ութ/-ը կատարվել են արտաքին գործընկերների հետ:

Ամբիոնի աշխատակիցները ակտիվորեն մասնակցում են մասնաճյուղի շրջանակում մշակվող տարաբնույթ փաստաթղթերի մշակման աշխատանքներին:

Ամբիոնը սերտորեն համագործակցում է ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության և սերվիսի ամբիոնների հետ, մասնակցում այդ ամբիոնների կողմից կազմակերպվող միջոցառումներին, կլոր սեղաններին և այլն:

Ամբիոնի կողմից ուսումնամեթոդական կարևոր մոտեցում է որդեգրվել ուսուցման կապի ամրապնդումը կյանքի հետ: Այդ նպատակով կարևորվել են ուսանողների ինքնուրույն աշխատանքների կատարումը, գործնականության ուժեղացումը, պրակտիկաների շրջանակի ընդլայնումը, կուրսային և ավարտական աշխատանքների թեմատիկայի վերանայումը:

Ամբիոնի կողմից դեռևս բավարար չափով չի իրականացվում համագործակցությունը մասնաճյուղի ուսանողական կառույցների, մասնավորապես, ՈՒԳԸ-ի հետ: Կարծում եմ, առաջիկայում այդ բացը կլրացվի, ամբիոնի դասախոսներից կլինի այդ աշխատանքների համակարգող:

Ամբիոնում անց են կացվում պլանով նախատեսված բոլոր նիստերը, քննարկվում են բոլոր հիմնական և ընթացիկ հարցերը:

Արտահայտվեցին - Ն. Խուդավերդյանը, Գ. Ավետիսյանը, Ա. Պոտոսյանը

Արտահայտվողները նշեցին, որ հաշվետու ժամանակաշրջանում ֆակուլտետի երկու մասնագիտական ամբիոններում կատարված աշխատանքները կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին - ամբիոնի վարիչների ընթացիկ հաշվետվությունը ամբիոնում կատարված աշխատանքների վերաբերյալ ընդունել ի գիտություն, իսկ ամբիոնի գործունեությունը գնահատել բավարար:

2.Լսեցին -ՈՒԽ նախագահ Լ. Ալեքսանյանին

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի ՈՒսանողական խորհուրդը իր հասարակական գործունեությունը ֆակուլտետում իրականացնում է՝ հիմք ընդունելով ԵՊՀ ԻՄ Ուսանողական խորհրդի կանոնադրությունը: Մասնավորապես ֆակուլտետի ՈՒԽ-ի գործունեության նպատակներն են հանդիսանում՝

- պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
- իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,

- աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
- մասնակցել ֆակուլտետում ներքին կարգապահության պահպանմանը:

Այնուհետև ՈՒԽ-ի նախագահն ամփոփ ներկայացրեց 2013-15թթ. ընթացքում կատարված աշխատանքները:

Ի սկզբանե ՈՒԽ-ի աշխատանքային նպատակն էր հանդիսանում ներգրավել ուսանողներին ֆակուլտետային ուսանողական խորհրդի աշխատանքներում: Այդպիսով, կազմվեց ֆակուլտետի ՈՒԽ-ի նոր խումբ՝ ընդգրկելով ֆակուլտետի շնորհալի ուսանողներին, որոնց շարքերը պարբերաբար համալրվում էին: Արդյունքում կազմավորվեց ֆոկուս խումբ, որը տարբեր ուղղություններով գործունեություն էր ծավալում՝ և' ինտելեկտուալ, և' մշակութային, և' սպորտային: Մշակութայինից կցանկանայի նշել 2 տարի անընդմեջ իրականացված Կանանց միջազգային օրվան նվիրված միջոցառումները, ՀՀ անկախության 23-ամյակին նվիրված միջոցառումը: Պարբերաբար կազմակերպվում էին նաև բանավեճեր ուսանողներին հետաքրքրող հարցերի շուրջ, կինոդիտումներ և ճանաչողական այցեր դեպի պատմամշակույթային վայրեր և' ՀՀ տարածքում, և' հանրապետությունից դուրս՝ մասնավորապես Վրաստան:

Իր աշխատանքների ընթացքում ուսանողական խորհուրդը սերտ համագործակցել է ֆակուլտետի դեկանի, ֆակուլտետում առկա 2 մասնագիտական ամբիոնների, ինչպես նաև դեկանատի հետ: Այդ ընթացքումՈՒԽ-ն հետևել և օժանդակել է դեկանատին ֆակուլտետային ներքին կարգապահության պահպանման, ուսանողների հաճախությունների հարցերում, քննարկվել ելուծումներ են տրվել կրթաթոշակների հարցով դիմած ուսանողների հարցերին, հետևողական է եղել քննական հարցաշարերի տրամադրման հարցում, յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբից օգնել է I կուրսեցիներին համապատասխանան հրաժեշտ մասնագիտական գրականության ընտրության և անհրաժեշտ թեմաների մշակման և կոնսպեկտավորման հարցում, այնուհետև կատարել է ընթացիկ քննությունների ժամանակ առաջացած բողոքների և խնդիրների պարզաբանում, ինչպես նաև որոշակիորեն վերահսկել է քննական պրոցեսները:

ՈՒԽ-ի ներսում գործող ֆոկուս խումբը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել արտադրական պրակտիկաների ծրագրերի մշակման գործընթացին և պրակտիկայի բազայի ընտրության հարցում:

ՈՒԽ-ի որոշ ուսանողներ ակտիվ մասնակցություն են ունեցել ընդունելության միասնական քննությունների և' կազմակերպչական, և'վերահսկողական գործընթացներին:

Այս տարիների ընթացքում ՈՒԽ-ն հետևողական է եղել ուսանողների առաջարկներին և պահանջներին:

Լսեցին - ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանին

Նա նշեց, որ 2013-2015 թթ. ընթացքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունն իրականացրել է կանոնադրական պահանջներից բխող գործառույթներ և միջոցառումներ, աջակցել է ուսանողությանը՝ գիտական և կրթական ոլորտներում, նպաստել ուսանողների գիտական, ստեղծագործական ու հոգևոր զարգացմանը և ուսանողական առօրյայի կազմակերպմանը:

ՈՒԳԸ նախագահ Լ. Բլբուլյանը ներկայացրեց կատարված աշխատանքների ցանկը՝ անհրաժեշտ մեկնաբանություններով:

Գիտական և գիտահանրամատչելի զեկուցումներ՝ հետևյալ թեմաներով

1. «Հաղարծին վանքային համալիր» - ’22.03.2014թ.*.*
2. «Գոշավանք» - ’22.03.2014թ.*.*
3. «Կիրանց վանք, կիրանց, Հայաստան» -’23.03.2014թ.*.*
4. «Մակարավանք, հայկական վանական համալիր» - ’23.03.2014թ.*.*
5. Զեկուցումների շարք - ’15.04.2014թ.*.*
6. Աշխարհի առաջատար համալսարանները - ’սեպտեմբեր 2015թ.*.*
7. Իջևան քաղաքը - ’սեպտեմբեր 2015թ.*.*:

Կինոդիտումներ՝

1. «Վանա ծովուն արշալույսը» գեղարվեստական ֆիլմի դիտում ’11.04.2013թ.*.*
2. « Կամուրջ » գեղարվեստական ֆիլմի դիտում ’հոկտեմբեր 2015թ.*.*
3. «Ոտքի դատարանն է գալիս» բեմադրության կրկնադիտում ’հունվար 2015թ.*.*
4. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ֆիլմի դիտում ’ապրիլ 2015թ.*.*

Գիտաժողովներ՝

1. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ուսանողական գիտական զեկուցումների շարք: Ներկայացվեց 5 զեկուցում ’ապրիլ 2015թ.*.*

Ինտելեկտուալ խաղեր՝

1. Թիմային ինտելեկտուալ խաղի մասնաճյուղի առաջնություն: ’մարտ 2014թ.*.*
2. Անհատական ինտելեկտուալ խաղ, տնտեսագիտության ֆակուլտետ: ’27..02. 2014թ.*.*
3. Թիմային ինտելեկտուալ խաղի մասնաճյուղային առաջնություն: ’նոյեմբեր 2015թ.*.*

Այլ տիպի միջոցառումներ՝

1. Հանդիպում ուսանողների հետ,որի ընթացքում ներկայացվել են ՈՒԳԸ – ի գործունեությունը և նպատակները ’սեպտեմբեր, 2014 - 2015թ*
2. Մաթեմատիկայի օլիմպադիա: Մասնակցեցին բնական գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետի 18 ուսանողներ ’փետրվար 2014թ*
3. Գրական - գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Մայիսյան հաղթանակներին ’մայիս 2014թ*:

Արտահայտվեցին - Հ. Մարգպանյանը, Գ. Հովհաննիսյանը

Արտահայտվողները նշեցին, որ ֆակուլտետի Ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ աշխատանքները կարելի է գնահատել բավարար:

Որոշեցին - ֆակուլտետի Ուսանողական խորհրդի և ՈՒԳԸ կատարած աշխատանքները հաշվետու ժամանակաշրջանում գնահատել բավարար:

3.Լսեցին - ընթացիկ հարցեր

3.1 Լսեցին - Ֆակուլտետի «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության»ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանի պարգևատրման մասին

/Զեկ Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ֆակուլտետի աշխատանքների արդյունավետության բարձրացման համար միշտ էլ օգտագործվել են տարբեր տեսակի խրախուսման ձևեր, այդ թվում նաև դրամական պարգևատրում: Ն. Խուդավերդյանը նշեց, որ նոյեմբեր ամսվա կտրվածքով առաջարկում է դրամական խրախուսանքի ներկայացնել ֆակուլտետի «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանին դասախոսի և ամբիոնի վարիչի պարտականությունները բարեխիղճ կատարելու համար : Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Որոշեցին - «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության»ամբիոնի վարիչ Գ. Հովհաննիսյանին ներկայացնել դրամական պարգևատրման :

3.2.Լսեցին տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի փոփոխման և հաստատման մասին:
/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ սույն թվի հոկտեմբերին հաստատվել է ֆակուլտետի նոր կանոնադրությունը և ըստ դրա պահանջների անհրաժեշտ է ֆակուլտետի գիտ խորհրդի կազմում կատարել փոփոխություններ : Միաժամանակ Ն. Խուդավերդյանը ներկայացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհուրդը կազմված է ի պաշտոնե, հրավիրյալ և ընտրովի անդամներից: Խորհրդի ի պաշտոնե և հրավիրյալ

անդամների թիվը չի կարող գերազանցել գիտական խորհրդի կազի 50%-ը: Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե մտնում է դեկանը՝ որպես նախագահ, ամբիոնների վարիչները, մեթոդական խորհրդի նախագահը և արհբյուրոյի նախագահը: Գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի գործունեության և մասնագիտությունների հետ կապված արտահամալսարանական ու արտաֆակուլտետային մասնագետներ՝ գիտական խորհրդի կազմի մինչև 20 տոկոսի չափով: Գիտական խորհրդի անդամների առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են: Գիտական խորհրդի ընտրովի անդամների թեկանուծությունները համամասնորեն առաջադրում են ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումները,որոնց թիվը հաշվարկվում է ըստ տվյալ ստորաբաժանման հաստիքների գումարային թվաքանակի: Գիտական խորհրդի ընտրովի անդամներ կարող են առաջադրվել միայն տվյալ ստորաբաժանման հիմնական և ներքին համատեղությամբ աշխատողները: Գիտական խորհրդի անդամների 25%-ը ուսանողներ են, որոնց ընտրությունն իրականացվում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը: Այնուհետև Ն. Խուդավերդյանը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի նոր կազմը.

1. Խուդավերդյան Նելլի - խորհրդի նախագահ,
2. Սարիբեկյան Անուշ - խորհրդի քարտուղար,
3. Մարզպանյան Հարություն - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ,
4. Հովհաննիսյան Գուրգեն - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժ/պ,
5. Սիրոյան Գարիկ - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
6. Ավետիսյան Գայանե - Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ,
7. Պոտոսյան Ակսել - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դոցենտ,
8. Ազիզյան Հռիփսիմե - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ,
9. Ասիլբեկյան Պավել - Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի ասիստենտ, ֆակուլտետի արհեստակցական միության նախագահ,
10. Սարուխանյան Մուշեղ - ՀՈՒԲ վարիչի տեղակալ,
11. Առաքելյան Վահագն - Իջևանի տարածաշրջանային քոլեջի տնօրեն,
12. Մելիքջանյան Լյովա - ԱՇԻԲ «Իջևանի մասնաճյուղ» ՓԲԸ կառավարիչ,
13. Ղահրամանյան Հովհաննես - Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալության տնօրեն,
14. Ալեքսանյան Լուիզա - ֆակուլտետի ՈՒԽ նախագահ,
15. Բլբուլյան Լիա - ֆակուլտետի ՈՒԳԸ նախագահ,
16. Սաֆարյան Սվետա- «Սերվիս» մասնագիտության III կուրսի ուսանողուհի,

17. Քարտաշյան Հասմիկ -«Տնտես. տեսություն» մասնագիտության II կուրսի ուսանողուհի:

Արտահայտվեցին - Հ. Մարգպանյանը, Գ. Հովհաննիսյանը

Որոշեցին - Հաստատել տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի նոր կազմը և ներկայացնել ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի հաստատմանը:

3.3.Լսեցին - սույն թվականի դեկտեմբերի 19-ին արտահերթ նիստ հրավիրելու մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Ն. Խուդավերդյանը նշեց, որ այս տարի լրանում է իր պաշտոնավարման հինգ տարին և ԵՊՀ ԻՄ ռազմավարական ծրագրի վերջնաժամկետը, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է սույն թվի դեկտեմբերի 19-ին հրավիրել ֆակուլտետի գիտական խորհրդի արտահերթ նիստ:

Որոշեցին - հաղորդումը ընդունել ի գիտություն

Գիտխորհրդի նախագահ *Ն. Խուդավերդյան*

Քարտուղար *Գ. Առուշանյան*